

891.71
7-52

ԳԱԱ. ՆԵՐԻՐԱՎԻԶ-ԳԱՂԵԿԵՆՈ.

ՀԱՅՈՒՀԻ ԳԱՅԻԱՆՔՆ.



ԹԱՐԳՄ. ԱՌԱԽ ՍԱՐԿ. ՍԻՄԵՈՆՆԱՑ.

Գիլն է 8 կուգի.

Կոդեական հեղինակ օդույնի.

ՄԱՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ
1907

1613m

750.

30 OCT 2006

ԳԱԱ. ՆԵՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՆԳԵՆՈՒԹՅՈՒՆ.


10 NOV 2011

891.71
3-52 52

մի

ՀԱՅՈՒՀԻ ԳԱՅԻԱՆԵՆ.

1009
5416



Բազուկ Հայոց
Հոհիսիստան Դաշնություն
Եկեղ. ծխմ. օրինակ


ԹԱՐԳՄ. ԱՐՍԵՆ ՍԱՐԿ. ՍԻՄԵՈՆԵԱՆ

ՄՈՍԿՎԱ. Խ. ՊՈՃ. Կ. Բ. Յ. Տ. Կ. 7/11-1422
ՏՊԱՐԱՆ Ք ԲԱՐԵՎՈՒՄԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՒՀԻ ԳԱՅԻԱՆԵՆ
1907

11.07.2013

12329

ՀԱՅՈՒԹՅԱՐ ՎՃՈՂՄՆ



ՀԱՅՈՒՀԻ ԳԱՅԻ ԱՆԴԻ

Գաղաթը թիսկերի մէջ էր: Մի տեղ քամին, կիրճի
միջով, պոկեց նրանց կանաչ ապառաժից, և նրա քեր-
ծերի վրայ յայանուեցին, կարծիս հէնց ժայռից բած՝
հարթ տանիքներ: Քանի մի զարաղաճներ այնտեղ ուր
գոնէ մի քիչ հող կար, տարածում էին նրանց վրայ իրենց
օրհնող ձիւզերը: Ցածում թնդում էր առուն իր, դէպի
հեռաւոր ծով, ծանապարհը խափանող ժայռերի դէմ
մղած յաւիտենական կռուի մէջ: Ամբողջովին ձերմակ փրս-
փրած յարձակւում էր նրանց վրայ՝ կրծելով ու ծակ-
ծկելով քարէ մարմինը: Նետում էր բուռ-բուռ, նեղու-
ցում կուտուած, խճերով, և, ուժասպառ, նրանց շուրջը
պայտ պայտ գործելով հոսում, անցնում էր հեռու,
հեռու:

Սյսօր—այս տարերային կռուին միացել էին ուրիշ
հնչելներ:

Կենդանացան քերծերի կողերը, արթնացան ու ծերպե-
րը, ամեն մի քարի մօտ երևացին մարգկային գէմքեր:
Դեռ մառախուղ էր, որ բարձրացան նոքա այստեղ—ա-
ւելի մօտ մեկուսացած զիւղին: Զիերը վարը ջրի մօտ
թողեցին և սողացին զէպի ձալաքարից կանգնեցրած
պատնէշները—ըստ երևութին զիշերը, որովհետեւ սառն
օրն արգէն նրանց թագստարաններում և գարաններում

գտաւ։ Սպասեցին երկնքի պարզուելուն։ Մէջի մէջ խրձիթները անկարելի էր նշմարել սակայն հէնց որ գորշագոյն ծուխը տարածուեց տանիքների վրայ և այնտեղից մեղմիկ քամին փչեց վառուող աթարի սասահիկ հոտ—աչքեցին առաջին տանտերերին կտուրների վրայ և շեշտակի գետին տապալեցին անվրէպ զարկերով։

Յուղմունք տիրեց զիւղի մէջ։

Ա.Ան կենդանի նեառւեց դէպի պատնէշները։

Երիասասրդութիւնը փորձեց դուրս թռչել կիսակործան դարպաններից, բայց առաջինն ընկաւ գնդակների տարափի տակ։ Շրջակայքում կարծես հաղարաւոր չոր ձղներ էին կոտրտում—միանուագ խօսեցին հրացանները, հեռուում մի ինչոր տեղ ախուր հնչուեց փողի ձայնը, նրան վարից պատասխանեց մի ուրիշը... Լեռից լեռ իրար յետելից յայտնուեցին ազդանշաններ։ Վիրը, այս ժայռի հէնց կատարին, կորիկոր վաղեցին զիւղի մի քանի պաշտպաններ։ Այնտեղ գեռ ևս տառաւոտեան քամին չէր վրդովել միապաղաղ մառախուե զիշերային անդորրութիւնը։ Նրանց յաջողուեց բարձունքը հասնել և այնտեղ դարան մտնել։ Երբ մառախուղը նոսրացաւ, ցածն ամեն ինչ պարզուեց և սկսեցին զարկել թուրքերին ընտրով։ Մի ժամ շանցած—թնդում էր ամբողջ շրջակայքը։ Իրաքանչիւր արաքոց դեռ շատ անդամ կրկնուում էր սարերում և խրանած գաղանը փախչում էր հեռու խուլ անկիւններ։ Ողբում էին պղնձէ փողերը, սգում կանայք՝ մահուան դատապարտուած հայկական որջում, բառաջում էր զոմում փակուած անասունը, իսկ ցածում նեղուցի մէջ կատաղել էր գաղանը շղանքուած կապարէ իշամեղուները, չարախնդութեամբ խայթելով

* * *

Կէսօրին հրդեհը բովանդակ զիւղը պատեց։

Մառախուղը վաղուց էր փոխուել տմպերի։ Ամպերը վեր ելան անհասանելի բարձրութեան, ժայռերի և քերծերի վրայ խոնաւութեան հետքեր թողնելով։ Տարածուեցին երկնակամարի վրայ և կամայ-կամաց շարժուեցին գէպի հեռաւոր ծով։ Վեհապանծ ու հպարտ լողում էին եթերի կապուտակ ովկիանում լեռների հոլանի գարգաթները, և միայն արծիւների սեորակ կէտելն էին, որ կենդանացնում էին նրա խորհրդաւոր անապատը։ Վարը կիրճերի և նեղուցների վրայ երամ-երամ թռչում էին աղուաւները հրացանների ձայթիւնների և անխոնջ առուի գոռգոռոցի մէջ լսում էր ուրախ, ինքնարաւական կռկոռյը։ Մարդկային ոխակալութիւնը պատրաստում էր մի փառաւոր խնջոյք, և, գուման թռչունը, հանգիստ նատած ժայռերի քերծերի և մի քանի ծառերի ձիւղերի վրայ՝ տեսնում էր իր ոսքերի տակ տասնեաներով երկարութեամբ ձղուած մեռելուիք, իրենց մարած աչքերով անհոգ տարածած ձեռներով ու անշարժ կրծքերով և ազահաբար քարափի վրայ մաքրում, սրում էր իր պողպատէ կտուցը։

Առաջինը բռնկուեց եկեղեցին։

Կարմիր լեզուն փայտէ սինը լիզելով օձի պէս փաթաթուեց նրան, ծխով պատեց և յանկարծ ոսկենման շեթով ձեղքեց տանիքը... Կծկուեց նրա զրկում, թագ կացաւ սև միսի քուլաների մէջ և երբ քամին ցրեց սրանց—բոցն արդէն տիրաբար վազում էր փատած փայտն ի մէկ՝ անդացած կրի վրայով... Դուրս թռաւ ծերունի քահանան, բայց սրան էր երեսն ի վայր, կրակի մէջ նետեց դաւաճանի հետապնդող գնդակը։ Նեղլեկ փողոցով թռիչքներով փախչում էին մանուկներ ու կանայք, սակայն այստեղ ևս, տսես թէ մի անազորոյն չոր ձեռք, խլացնող գնդակիների անձրեւ էր տեղում... Մարդիկ սայթաքում էին, որ այլ ևս վեր չելնեն այնտեղ՝ ուր նոցա համառ էին կապարէ իշամեղուները, չարախնդութեամբ խայթելով

նոցա և գէմքը և գլուխը և մէջքը:

Լուռ էր ժայռի կատարը:

Այնտեղ հայ Փիզաները վաղուց արդէն սպառել էին փամփուշները և այժմ ընկած էին ապառաժի վրայ՝ անշարժ, խողիսողուած կոկրզներով ջարդուած գանգերով... Ալ կարմիր շեթերը սահում էին դորշ քարի վրայ և ջորանում տարօրինակ արիւնոտ զրերով...

Երեկոյեան դէմ գիւղից մնացին ծխացող ածխակցյաեր... Սև միի քուլաները ծածանուում էին ամեն կողմ, մերթ բանալով մերթ փակելով անթիւ կրակների կաս-կարմիր, բորբոքուած աչքերը: Տապից ծռմռուում էին զարաղաչ ները, և որպէս բոցավառ մի մատ, որ ցոյց է տալս երկնքի սրբազն անդորրութիւնը, կանգնած էր հսկայ հրակէղ սիւնը—այրուած եկեղեցու վերջին մնացորդը: Մուռ-մուռ կայծաքարառ փողոցները մերթ զարիվեր, մերթ գոդաձե՝ ծածկուած են դիակներով: Որտեղ ընդհարուումը կտաղի է եղել այնտեղ նրանք կոյտերով են: Դիակների վրայ ցցուած էին ձեռքեր ու ոտքեր. քանի մի ձեռներ կծկում և բանում էին մատները, ոտները կուչ ու ձիգ լինում... Կեանքը հեկատոմթերում դեռ իսպառ չէր մարել: Կիսայրուած մանուկները մոխրակցյաերից ցոյց էին տալս իրինց սև, ածխացած գէմքերը: Տների անկիւններին զարկուած ծծկերները, փշուած զանգերով, իրր մեռելութի՝ թափթափուած էին ամեն կողմը: Մի ինչոր տեղ ոռուում էին ողջ մնացած զամփոները և շուրջն ամեն ինչ խեղդում էր առուի չարախինդ աղմուկը և ագռաւների յաղթական կուաւոյը:

Թուրքերը ներքւ էին քշում կենդանի մնացածներին:

Գերուածների մէջ տղամարդ չկար: Քանի մի երեխաներ, կանայք և կցաւեր:

Մէկը յետ մնաց:

Ամբողջովին արիւնոտ և ցեխոտ: Թուրքը բարձրացրեց

դաշոյնը և արագութեամբ ակօսեց նրա մերկ ուսոր: Կարմիր բօսորային հեղուկը մի անգամից ժայթքեց նրա մարմնի վրայ:

— Վաղե՛ր շուտ, քրիստոնէայ շուն:

— Ես չեմ կարող—հառացեց նա:— Զի՞ս տեսնում ու քերս:

Կայծաքարէ խճերն արիւնելու չափ պատառուաել էին նրանց...

Թուրքը նայեց—նայեց:

— Թող ես այստեղ մեռնեմ: Ես հիւանդ պառաւս ինչ՞դ եմ պէտք:

— Իսկապէս,—ոչ մի բանի...

Բռնեց մազերից և զլուխն այնպէս յետ ձկեց, որ կոկորդը դուրս ցցուեց. ապա գաշոյնի մի հարուածով պատռելով որկորը՝ մի վերջին անգամ աքացեց նրա ջղաձգուող մարմնին...

* *

Ասկեարներն առջեկց մի աղջիկ էին տանում:

Սև փայլուն ծամերը Ճոխ թափուել էին թիկունքն ի վայր, հրավառ, խոշոր աչերը հպարտ ու համարձակ նայում էին անողորմ լիկողներին: Գեղեցկուհին, շեշտակի ըպէս նետ, կարծես իր յետեկց մի յաղթական բանակէր տանում: Երբ տաճիկ սպան իր ձեռը զրեց նրա կլորիկ, յաղթանգամ ուսին, նա իր արհամարհական հայեցքով այնպէս գամեց նրան՝ որ նա մի կողմ քաշուեց, մըթմըթալով. «Ես զիտէի քեզ ի՞նչ կանէի, եթէ փաշայի հրամանը լինէր»: Եւ յետոյ ժպատավլ դարձաւ նրան.

— Դայիանէ, մի վախիր, մենք քեզ ձեռ չենք տայ: Դումեզ կենդանի ես պէտք:

— Ես ոչպից չեմ վախենում: Խակ մահը միշտ ձեռ-

քին է:

— Կնոջ բան չէր ձեռնարկածդ: Մենք լաւ գիտենք, որ դու էն երիտասարդներին ոտքի կազնեցրիր Ալի. Մահմեդ Քըրղի դէմ:

— Զէ որ նրանք մորթոտեցին մերոնց, ցածում մի ամբողջ հայկական գիւղ այրեցին և իրենց հետ՝ տարան կըս աղջիկներին:

— Այդ որ օրուանից դուք քրիստոնէայ շներդ, սկսել էք կոճել ձեր տէրերի պատուհասող ձեռքը:

— Այն օրից, երբ վճռեցինք՝ մեր հայրենիքում մենք տէր լինենք:

— Կարծեօք դու էիր խմբի առջեկից կոռւողը և Հուսէյնին վերաւորողը:

— Մարտի դաշտում:

— Քեզ նրան կը յանձնեն սաղ գլխով:

— Նա հէնց այն էլ կըստանայ, միայն թէ առանց մարմի:

Սպան ծիծաղեց:

— Վաղոնց է, ինչ դուք, ստրուկներդ և ստրուկների զաւակներդ, սովորել էք այդպիսի լեզուով խօսել:

— Հայերն երբէք ստրուկ չեն եղել: Նա չէ ստրուկը, որին բռնի ոյժով շղթայակապ են պահում: Մենք մի մեծ ժողովրդի մնացորդներ ենք—և նահապետներ ենք լինելու աւելի հզօր ցեղի: Ո՞վ պաշտպանեց քրիստոնէայ աշխարհը ձեր յաղթական, աւերիչ արշաւանքից: Կար ժամանակ, որ մենք շատ էինք: Մեր թագաւորութիւնը—ժողովեց մինչ ծով—Աստուած որոշեց որպէս կայան ազատ ժողովովների: Մենք երկար, երկար դարեր կուսում էինք ձեղ հետ և քսան ու հինգ միլիոն ազատ հայկազուններից մինաց և հինգը նայիր շուրջդ—բոլորն, ինչ որ տեսնում ես քո առջե, ոռողուած են մեր արիւնով: Ամեն մի ժայռն, ո, եթէ կարողանար, կը պատմէր քեզ մեր յաղթութիւնների

և ոնլուր տառանապանքերի մասին: Դուք մեզ ատում էք և մեղնից վրէժիսնպիր լինում, որովհետև մինչի այսօր չկարողացաք ստրկացնել Հայաստանի վեհ հոգին: Դուք իբրև արծուի շղթայեցիք նրան և երկաթէ վանդակի մէջ փակեցիք, սակայն հոգու համար գոյութիւն չունին կապանքեր: Լսիր որպիսի երգեր ենք երգում բանտաերում: Քանի կենզանի է երգը—չէ մեռել ժողովուրդը: Մինչև այսօր մենք ողորմելի նահատակներ էինք, բայց փառք հայ կնոջը: Մենք իդուր չսովորեցինք և դարձանք մեր խղճուկ գիւղերն օդնելու նոցա՝ որոնք խարխափում են խաւարի մէջ: Նահատակները ձայնակցեցին մեզ և դարձան ոխտկալներ: Բըռնակալները կարող են հանդիսա քնիւլ—քանի դեռ ժողովուրդը լրում և վախենում է... Բայց երբ կը զզուեցնէ նրան անմոնչութիւնը և կը ձանձրացնէ երկիւզը,—թող սարսէ բռնաւորը: Զկայ աւելի գժուարագոյնը, ամենաանհնարինն իսկ խոնարհում է նրա տռչե, ով չէ տատանում յաղթութեան և մահի առաջ: Երբ մարդ չէ ցանկանում այլևս ապրել իբր սարուկ,—վախճան ձեր թագաւորութեան... Նրա ժամը խփեց, և կը մեռնենք մենք, թէ ոչ—միենցն չէ: Հայ վարժուհուն աշակերտած մանուկները զիտեն, որ իրենք մի մեծ ժողովովի զաւակներ են և նրանց ձեռքին է նորէն կոել իրենց ազատութիւնը: Մենք չէինք կամենում ձեզնից բաժանուել: Մեր տեսչանքն էր—ապրել ձեղ հետ հաւասար՝ հաւասարների մէջ, ազատ՝ ազատների մէջ:

— Մի վշշար, օձ... Ապա թէ ոչ երդուում եմ, զլուխը կը տանեմ փաշային:

Գայիհանէն ծիծաղեց և, թեքուելով, ձկեց վիզը:

— Կարի՛ր, եթէ կը համարձակուես, ստրուկ: Կարի՛ր և տես՝ ինչպէս է մեռնում հայ աղջիկը... Քամին կը տեսնէ այն և կը պատմէ լեռներին... Ծառերն իրենց սօսաւիւնով կը հաղորդին թուշուններին, թուչունները կը ոլա-

նան աշխարհի բոլոր ծայրերն և ամեն տեղեց կը հասնեն
վրիժառու հայ Փիդաները... Դէհ, ի՞նչ ես կանգնել ևս
սպասում եմ, տես զունատուեցի, դողմում եմ տրդեօք քո
անզօր սպառնալիքի առաջ: Ոչ բորենի, գու չես, որ պիտի
սարսեցնես «Հայկեան առիւծին»:

—Նա ով քեզ այդպէս անուանեց, —իր մսով կերակ-
բեց Տրապիզոնի ագռաւներին:

—Իսկ նրա երգերը մնուցանում են մի գժբաղդ ժողո-
վողի սիրան ու միաքը:

—Այն երգիչ քո փեսացնէն էր:

—Եցո, բայց ես չսղացի նրա վրայ: Նահատակների վրայ
չեն լալիս—նրանցով միսիթարւում են: Եւ միմիայն այն
գործն է հաստատուն, որի համար թափուեց նրանց ա-
րիւնը... Իսկ մեռնել ի՞նչ մեծ բան: Մենք բոլորս մեռ-
նելու ենք: Քեզ էլ որդերը կուտեն այնպէս, ինչպէս ինձ
կը կտցահարեն վայրի թռչունները...

* * *

Երկու օրից յետոյ հեռուն—ներքեր կապուտին էր տա-
լիս:

Կարծես ոտքերիդ տակ յանկարծ անգունդ բացուեց...
Երբ արեն արդէն բարձրացաւ, —կապուտակ անգունդում
ծալքեր յայտնուեցին, նրա վրայ երկացին կանաչ խոր-
շոմներ: Մօտակայքում չայլազների թեւերի պէս փայլվիլում
էին առազասաները: Սև ծովն այդտեղեց մի տեսակ թարմու-
թիւն, զով էր փշում... Զախակողմը հազիւ երկում էր
սպիտակ Տրապիզոնը, և նրա պարիսպների վրայ, ինչպէս
անթիւ, հիւսած սանդուխքների աստիճանների վրայ
խայտում էին հարաւի գուրգուրող օրուայ պայծառ ծա-
ռազայթները...

Գայիանէն աչքը բարձրացրեց. հրդհուած զիւղի գե-

րուած հայերի կէսն էլ չէր մնացել:

Նու յիշեց կանանց զիշերուայ աղաղակը և մանուկների
սրտածմլիկ կոծը:

—Զեր թափած արեան իւրաքանչիւր կաթիլի համար
դուք թանգ կը վճարէք աղին:

—Երեւի քո աղին: Դու լսել ես այն առակը, թէ ինչ-
պէս նապաստակը պատրաստում էր վրէժ առնել գայլեց:

—Մի ուրիշն էլ կայ: Գայլերի գէմ գանուեցին յան-
դուգն որսորդներ:

—Հայերից:

Թուխալը հանգարտ գոլորշեով բարձրանում է երկրից...
Իսկ կայծակները կործանում են պալատներն ու մէշտ-
ները: Խիզախութիւնը թղյլին ուժեղի հետ է հաւասա-
րում: Խելքը յաղթութիւն պարզեում...

—Դու այս ամենը զպրոցնեմն ես սովորել:

—Ուրիշ շատ բաներ ևս երկրի վրայ միայն երկու իս-
կական ոյժ կայ:

—Որոնք են:

—Մեծահոգի միաքը և նահատակի արիւնը:

* * *

Փաշայի մեծ բախն ամրողջովին չինարի ստուերի տակ
է: Ասկիվառ արեւ խաղում է մօխրագյն սալաքարերի
վրայ: Հանդարտ խօխօջում է շատրուանի շեթը: Նրա մար-
մարիսնին ամեն աեղից պատել են արարական փաթա-
թուկները: Վաղեցին զափթիաները ամեն կողմերից: Պատշ-
գամբի վանդակապատի միջեց զիտում էին փաշայի կա-
նայք: Լսել էին բերելու են զեղանի Գայիանէին և հետա-
քրքրութեամբ փնտրում էին նրան կապուած հայերի
փոշու և ատնջուած բազմութեան մէջ: Թէ որ խելք
լինի—հարեմ կընկնի: Դրա վրայ հասարակ աչքով

չպիտի նայել: Այդպիսի գեղեցկուհուն փաշան սաղ գլխով
քիւրդ իշխանին չե յանձնի: Անպատճառ իրն կ'առնի:
Դէ՛հ արի ու կառավարի նրան:

Գայիանէն նստեց չինարի տակ:

Նրա ձեռքին—երկու վարդ կայ: Կեանքի վերջին ողջը-
նը: Անծանօթ բարեկամի, «զնաս բարեաւ»ը: Երբ նրան
տանում էին արևի լուսով ողողուած, տօթ փողոցով,
յանկարծ վերեկից լսուեց նրա անունը: Նա բարձրացրեց
զլուխը: Պատուհանի փեղկը բացուեց և կրկն պինդ հա-
րուածով փակուեց: Գայիանէն ոտքերի տակ նկատեց ծա-
ղեկներ... Ով էլ լինիս դու, թող օրհնէ քեզ տանջուած-
ների Աստուածը, քո անուշահոտ զգուանքիդ փոխարէն:
Դու ձգեցիր գթութեանդ չեղեկ ծառադայթը դատապար-
տեալի վերջին տառապանքների վրայ: Կարծես սրբազն
հայրենիքը—այս ծաղիկներով շշնջաց նրան: «Ես զոհերիս
չեմ մոռանում, և յաղթութեան ժամին քո յիշատակի
առջե ծունկ կը չողեն աղատ մարդիկ... Տօթ փողոցն
արդէն վերջանալու վրայ էր:

Փաշան դուրս եկաւ:

Ժանզոտ, կարմրտած: Դաժան, պաղ աչքեր և հաստ,
վաւաշոտ շրթունքներ:

—Ո՞ւր է Գայիանէն:

Սպան մօտ բերեց նրան:

—Դու չափազանց ափսոս ես կախազանի օղակի հասար:
Ես քո մասին լսել էի, բայց պատմածը միշտ անդշն է:
Քեզ կախելու դեռ ժամանակ ունիմ: Մեր մօլլան իմ
հարեմում կ'այցելէ քեզ Եթէ քո սիրունիկ գլխում խել-
քի գեթ չնչին նշոյլ կայ, դու կը հասկանաս, որ Ճշմա-
րիտ հաւատն այն է, որը յաղթութիւն է պարզեւում: Սուլ-
թանը կը ներէ մահմեդականուհուն և իմ կնոջը...

—Փաշա, ես երեք չեմ գաւաճանի իմ պատերի հա-
ւատին և քո կինը չեմ դառնայ:

—Գիշերն ու ցերեկը քեզ այլ բան կ'ուսուցանեն:
—Ոչ: Ուղարկիր ինձ կախազան ընկերներիս հետ: Միայն
այս գթասրառութիւնն եմ աղերսում քեզնից: Ես, այն
լեռնոտ զիւղում տարածեցի գիտութեան լցոր—թղյլ
տուր ինձ ուրեմն սփոփել մերոնց՝ նաև իմ կեանքի վերջին
ժամերին:

—Ինչոր ես հրամայեցի, այնպէս էլ կը լինի: Մարակն ու
քաղցը վայրենի նժցգին դարձնում են հեղ ու հնազանդ:

—Բայց ոչ այն կնոջը, որ նուիրուած է իր ազգին:

—Տարեք դրան:

Մի ամբողջ օր մօլլան առանձին եռանդով համոզում
էր գեղեցկուհուն... Երբ նա դուրս ելաւ, նրան փոխարի-
նեց փաշայի պառաւ կինը և աղերսում էր Գայիանէին
խնայել իր գեղեցկութիւնն ու ծաղկի օրերը...

—Ես էլ հայ էի... Կնոջ բաղդն այս է, մեր մարմինն
ու հոգին պատկանում են մեր իշխողներին:

—Ոչ մայրիկ, մարմինը նրան՝ որին ես պատկանում
եմ, հոգին—Աստծուն: Դու արդէն չափազանց պառաւել
ես և վաղուց չես տեսել մերոնց: Ազատութեան հովը փր-
չում է լեռներում: Անմառնչ հօար դարձել է ժողովուրդ:
Իրենց մայրենի լեզուն մօռացողները, վերստին սովորեցին
այն: Ռուսաստանում, որտեղից եկայ ես այստեղ հայերը
խօսում էին ուսերէն: Օրիորդներն երազում էին ոսի հետ
ամուսնանալ, նրանց եղբայրները ոսուհիների հետ: Մենք
մեր ազգանունները փոխեցինք ուռականի: Երգում էինք
ուռական երգեր, կրթւում ոուս զրքերով: Երիտասարդ-
ները շտապում էին հիւսիս, ոուսական բարձրադժն զրպ-
րոցները: Մեզ փաղաքշում էին, մեզ հովանաւորում:
մեզ համարում եղբայրներ—և մենք արդէն ձուլում էինք
հաւատակիցների հետ: Հայերիս և նրանց հասկացողու-
թիւնների մեջ այնքան քիչ էր տարբերութիւնը, որ հա-
զիւ երկու երեք սերունդ և հէնց հայ անունը կը կար-

չըր իսպառ։ Սակայն, ըստ երեսւթին, Աստուած չցանկացաւ այն ժողովը մահը, որն իր ամենալաւագոյն զաւակների արիւնով այնչափ երկար ծառայել էր նրան. . . Պետերբուրգում ուրիշ հովեր փչեցին։ Մեղ իրենց բարեկամնիրին, —նրանք յանկարծ թշնամի ձանաչեցին։ Փակեցին մեր ուսումնարանները, և մենք յանկարծակի յիշցինք, որ հայ ենք։ Արգելեցին, իրենց թշուառ դոյութիւնը մի կերպ պահպանող օրաթերթերը —և մի ամբողջ ժողովուրդ խօսեց իր մայրենի լեզուով։ Մենք հրատիրեցինք ուսուցիչներ կ. Պօլսից, Զմիւռնիայից —և հայ դպրոցը, մեկ փակուածի փոխարէն, բաժանուեց հաղարի —ամեն մի հայ ընտանիք՝ դպրոց դարձաւ։ Անվատահութիւնը խորունկ վիշտ պատճառեց, արհամարհանքը —վերաւորանք, չարակամութիւնն ու հալածանքը —ի մի խմբեց թշուառներին։ Մենք ապաստան գտանք եկեղեցու մէջ։ Մոլի կուրութեամբ, մեր երեկուան բարեկամները, կամենում էին յափշտակել նաև Տիրոջ սեղանները. . . Եւ գու գիտե՞ս ինչեր տեղի չունեցան. . . Ոչոք մեզանից չ' ցանկանում անջատուել այնտեղ Ռուսաստանից, այստեղ Տաճկաստանից, բայց մենք հաւասար պէտք է լինենք հաւասարների մէջ, ազատ՝ ազատների մէջ, նախ և առաջ մարդ և ոչ հօտ. . . Եւ քանի դաժան, քանի վայրագօրէն են յօշոտում և ոչնչացնում մեզ, հաւատացիր, ի՞մ մայրիկ, այնքան մօտ է սրբազն յաղթութեան պայծառ որը։ Այստեղ մեր գէմ ոտքի են հանում թուրքին, այստեղ —քիւրդին։ Մեղ չեն պաշտպանում, —ուրեմն մենք ինքներս մեղ պիտի պաշտպանենք։ Երիտասարդութիւնը սնւում է այն զիաակցութեամբ, որ պէտք է լինել ուժեղ և արի։ Ո՞հ, մայրիկ ջան, տղատութեան մեծ գործին ամենից շատ ծառայում են կախաղանն ու բանութիւնը. . . Կայ միմիայն մի ծշմարտութիւն —ով նրա հետ չէ, որպիսի մարակներ էլ նրա ձեռքում լինին, —կ'ոչնչանայ. . .

* *

Ամբողջ օրն ու երեկոյեան, նրան, յոդնած, քաղցած և տանջուած, ոչնչ չտուին ուտելու։ Յետոյ եկաւ ներքինին և ցոյց տուաւ Ճիպուներն, որոնցով պիտի ծեծէին նրան։ Երեաց կրկին պառաւ կինը, բայց նա միայն լալիս էր Գայիանէի համար։ Զկարողացաւ համողել նրան. — Փաշայի ապարանքում յիմարացած խղճուկ կինը՝ խօսք իսկ չուներ դրա համար։

— Միւնոյն է, քեզ ոյժով կ'առնեն։ Դու զիտես, որ մեր բաղդն այսպէս է։ Մենք էշերի նման ենք, ով մեզ ծեծում է, նա էլ մեր տէրն է։ Փաշային չես ուզում, — նրա ծառաները, կեղտոտ, հոտած գեագաները կը յափշտակին, իսկ յետոյ միւնոյն է — կախաղան։

Գայիանէն յամառեց։

— Մի վախենար, — իմ փոխարէն, ես այժմ միմիայն մահին եմ պատկանում։ Ինձ վրայ ուրիշ իշխող չկայ։ Եւ կարող չէ լինել. . .

* *

Գիշերը նրա սենեակը Ճրադ բերին և փակեցին։ Վերջապէս նա միայնակ մնաց։

Սյժմ նրա վրայ հսկող աչք չկայ, միայն թէ բոլորը մինչեւ առաւօտ վերջացնէ։

Գլուխը վշշել անկարել է, սենեակը պատած է փուկ գորգերով, պատերը նյունպէս։ Դաշտյն չկայ, որով պատոէ կուլծքը և ստիպէ լոել այն սիրաը, որ այնպէս ուժինօրէն բարախում է կրծոսկրի վանդակի մէջ, որպէս աշաբեկուած մի թռչուն։

Նստեց և մատորումների աշխարհն ընկաւ։

Միայն ուրախութիւն ու երջանկութիւն է սպասում
նրան:

Տփխիսի լուռ փողոցներից մէկը Սօլոլակում: Փոքրիկ,
լուսկեաց աներ: Բովանդակ բակը սերկելինու սառւերի
տակ է: Նունենու ծաղիկների կարմիր, անամօթարար բա-
ցած շուրթերը, գյոնզգյոն աւակիսապատ սրահը, ուր արել
ձերմակ պատի վրայ խաղում է սադափի, ետղուդի և
զմրութափի պէս, և պառաւ մօր սիրուն, բարի դէմքը...
Դայիսանէն եկաւ գիֆապալայից, առաւ զիրքը և վազեց
դէպի սերկելինու զովասուն շուրաքը: Նա ժամանակ չու-
նի—անհրաժեշտ է շատ զիտենալ ու աշխատել որպէսզի
օգտակար լինիս քո ժողովրդին: Հասան ծանր օրերը: Խեղ-
դում են նրան և՝ այսանեղ և՝ Տաճկաստանում: Հայի հա-
մար հանգրուան չկայ, եթէ նրա կրծքում գեռ բարախում
է ազնիւ սիրա, եթէ նա չէ վաճառուել տիրող բռնու-
թեան: Մեծառուների բանը հեշտ է, սակայն նրանք են
իրենց ցեղի առաջին թշնամիները: Նա զոհում է նրանց
մեծ մեղքերի համար... Դրանցից մէկը նրա հետ նշան-
ուել է կամենում: Մայրը ննջում է և երազում աղջկան
միլիոնատիրոջ տրուած: Բստ իր հասկացողութեան սի-
րում է նրան և Աստուած զիտէ ինչպիսի բազգաւորու-
թիւն համարում ուկեզօծ բանալ:

* * *

Ինչպէս նա բաժանուեց նրանից... Ինչպէս էր հեկեկում...
Կենդանի՞ է արդեօք նա և ծաղկում են նունենիները նրանց
փոքրիկ բակում, երգում են էլի արշալցուին կանաչ սեր-
կելինու վրայ թռչունները և փոքրիկ նուշանիկը պատ-
մում է նրանց հեքիաթներ: Յիշում է նա արդեօք Գա-
յիանէին, այդ հեքիաթները իրեն պատմողին, այնպէս ան-
պացոյն և միամիտ, ինչպէս նրանց պարտիզի խոտերի մէջ

բաած դալուկ զանգածաղիկները...

Ժամանակ է... Մի փոքր յետոյ ուշ կը լինի:
Եթէ կարելի չէ այլևս ապրել ու կռուել—պէտք է մեռ-
նել, որպէսզի քո պատմութիւնը քաջալերէ թոյլերին և
ովեորէ երկչոտներին:

Ոչ ոչ քաւթառ փաշան և ոչ նրա հոտած, զազիր
սպասաւորները չեն կարող դիպչել նրան:

Մահը նրա առաջն է... Ահա, նա այս աղօտ, հազիւ
հազ լուսաւորող լապտերի մէջն է...

Ժամանակ է... Առաւոտն արդէն ուշ կը լինի: Գուցէ
յանկարծ հոգուս մէջ ափսոսանքի զգացում ծագէ իմ
վարդագյոն, ջահիլ կեանքիս համար: Թերեւ հրապու-
րուեմ խանդավառ արեւով, լազուր ծովով, կապուտակ
երկնքով, անուշահոտ ծաղիկներով, մաղկային ծիծաղով և
փաղաքշանքով... Դիշերը հեշտ է: Նա քեզ հովանաւորում
է բոլոր զայթակղեցուցիւ ցնորեներից: Կարծես ասում է
«Ես մահուան ուրուականն եմ, մի վախիր նրանից: Նրա
մէջն է և իմ խաղաղութիւնը և՝ իմ հանգիստը: Ամեն
ինչ կըտայ քեզ բացի զամբանից»:

Ժամանակ է:

Սոսկալի տանջանք, բայց լաւ է կրել այն:

Նզովուկր գեղեցկութիւնս: Եթէ սա չլինէր, նրա զէմ-
քին չեին սկեռուի արփոտ հայեացքներ: Նրան, Գայիա-
նէին, չեին զատի գերի ընկերներից և այժմ նա պառկած
կը լինէր հողէ անկողնում, նրանց հետ միասին: Դէպի
նա չեին ձգտի անասնական ազահութեամբ ստորաքարշ
ձեռներ և անմաքուր հայեացքները նրա հոլանի մարմինը.
Չեին պղծի՝ զարշելի մաքերի աղտոտ հետքերով:

Ժամ է:

— Եթէ ես կարողացայ ապրել ու մատուցած լինի
թող նա իմանայ, որ առաջարկ համար համար առաջ
չկեցայ մարտիրոսական մասին:

7/11-1922



Նա կամենում էր աղօթել: Ի որպէս մասս
թայց ինչու:

Միթէ սա աղօթք չէ: Միթէ անձնազոհութիւնն ու
մարտիրոսութիւնը չն հաշտեցնի իր հետ նախախնամող
երկինքը:

Նաւթը թափեց թասի մէջ:

Վերջին անգամ սեղմուեց դալուկ, սպրդնած դէմքով
արդէն թոշնած վարդերին: Նրանց իր վերջին հրաժեշար
տալով անջատուեց այն ամենից, ինչով պայծառ և հրա-
պուրիչ է կեանքը: Նրանց ևս ճգեց թասի մէջ: Վառեց:
Հուրը պրալած ահռելի լեզուներով: Տատանուեցու սև սե-
քուլաներով բարձրացաւ առաստաղը:

Գայիանէն խփեց՝ աչքերը...

— Տէր Աստուած... Ներիր...

Յափշտակեց թասն և մի ակնթարթում դէմքն ընկղմեց
նրա մէջ:

Զարհուրելի ծիչն ողջ հարեմն արթնացրեց:

Կոտրեցին դուռը: Դաւածան բոցը պանում էր խամեն
կողմ: Գորդի վրայ, պտուկի մէջ, սողում՝ էր ինչ յոր տձեւ:
Ճխով մրոտուած, նեխուող բան...

* * *

Հին մէյտանում անսովոր իրարանցում էր տիրում:

Ամեն ծայրից շտապում էր ժողովուրդը: Գեղանի Գայ-
իանէի համբաւը տարածուեց ամբողջ քաղաքում: Այ-
րուած աղջկայ մէջ այնքան կեանք էր մնացել, որ զադի-
ների դրած վճիռը հնարաւոր էր՝ ի կատար ածել: Հայերը
փակուել էին իրենց տներում, դուրս զալ անկարող էին:
Նրանք քաջ զիտէին, թէ նման բոպէներին ի՞նչ է ներ-
կայացնում մաշմեղական խուժանը:

Որևէն այնպէս էր այրում, որ նրա սևեռած հայեացքից

լազուր կրակով վառուեց բովանդակ ծովը: Նաւահանգիստ-
ների մօտ սեխն էին տալիս իրենց անհամար դրօշակներով
առեւտրական շոգենաւերը... Առագաստները հեռուից
Ճերմակ բոցի փունջեր էին թւում: Մայթերի սալաքա-
րերը վառւում էին: Դաշիճը, կախաղանի սանդուխքի վրայ
նստած նիրհել էր... Եյս տապից կախաղանի փայտերն իսկ
լալիս էին խէմէ արցունքներով: Շները սողում էին ստու-
երի տակ և ոռնում՝ երբ այնտեղից անխղջօրէն քշում
էին զովին կարօտ մարդիկ: Մէյդանի հինաւուրց կիպարիս-
ները բուրում էին համեմի պէս խիստ: Մաղկավաճառները
հաղթ հաղ թրջում էին ծաղիկները ջրով՝ երբ նա գո-
լորշիսանում էր դեռ չյագեցրած նրանց ծարաւ պսակները:
— Բերում են, բերում...

Նեղլիկ և ցեխուտ փողոցից աղմուկ և անէծք լսուեց:
Թմբկահարում էին, լսում էր ձիերի սմբակների դոփիւ-
նը... Ճռճռան սայլի մէջ—ոչ մի բանով չծածկած, ինչպէս
մի բաց վէրք, նայում էր Գայիանէի դէմքը՝ ընկատելով իր
խանձուած, ուռած աչքերը: Խոխոսոցի շնչում էր կուրծ-
քը... Անտանելի ցաւից կծկուել էր հիւծուած մարմինը...

Ածիլուած ձակատով երեխան առաւ քարը և շպրտեց
վրան:

— Շների առաջ ճգեցէք:— Աղաղակում էր մի պառաւ-
որին սայլը հրել էր պատին և ուղեղ թքեց Գայիանէի
երեսի վէրքին:

— Զուր... Զուր.— Խոխոսում էր խեղձը:

Մի թուրք խղճաց, լցրեց թաս և պիտի մօտենար,
բայց զափթիան հրեց թասը և ջուրը թափուեց շեկացած
գետնին:

Զարթեց քնաթաթախ դաշիճը... Թրջեց պարանը: Եւ
այն ջուրը, որ ինայեցին նահատակ Գայիանէին, պէտք

Եկաւ նրա օղակին:

* * *

Մի քանի տարի առաջ Տրապիզոնում ինձ պատեցին
այս:

Ես մոռացայ «ազգի նահատակի» անունը: Ով յիշէ,
թող ինձ ուղղէ:

Գեղեցկուհու գերեզմանը անյայտ է:

Ծերունի-հայը պատկերաւոր աւելցրից. «Մեր ամեն
մէկիս սիրտը—նրա գերեզմանն է: Նա թաղուած է ժողո-
վըդի յիշողութեան մէջ: Նրա տանջանքների գնով մենք
պիտի ձեռք բերենք և՝ աղատութիւն և՝ երջանկութիւն»:
Խաղաղ կանգնած էին մէյքանում սև, վեհաշուք կիպա-
րիմնեղը: Կապուտակ ծովը փաղաքշում էր իր սիզաւէտ-
եղերքը: Զինջ էր ու անդորր հարաւի երկնքի անհասա-
նելի բարձունքը... Մօտակայքում վաճառում էին ալ-փար-
թամ վարդեր: ... Նրանց քցրերը՝ որոնք ընդունեցին անբիծ
նահատակի վերջին համբոյը:



12.329

891.71

8-52